# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ԳԱՄԱԼ ԱԲԴԵԼ ՆԱՍԵՐԻՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

## ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ԳԱՄԱԼ ԱԲԴԵԼ ՆԱՍԵՐԻՆ, ՎՍԵՄԱՇՈՒՔ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՀԻՐԵ

Հայ ժողովրդի հավատի կենտրոն Ս. Էջմիածնից ողջունում ենք Ձեզ, Միացյալ Արաբական Հանրապետության Նախագահ ընտրվելու առթիվ:

Ձեր մեծ Հայրենիքի սահմանների մեջ ապրող բազմահազար մեր հայ հավատացյալների սերը և հավատարմության զգացումները հանդեպ Ձերդ Վսեմության և Ձեր Հայրենիքին, Մեզ խոր մխիթարություն են պատճառում և Մենք վստահ ենք, թե ինչպես ցարդ, նաև այսուհետև Ձեր բարձր հովանավորությունը անպակաս կլինի Հայ Եկեղեցու և հայ հավատացյալների վրայից, համրապըն-դումն արար և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության, որ Մենք հաստատեցինք Եգիպտոս մեր այցելության առթիվ 1956 թվականին, մանավանդ երբ Մենք բախտ ունեցանք Ձեզ անձամբ ողջունելու:

Կմնանք աղոթող առ Աստված Ձեր քաջառողջության, արևշատության և հայրենաշեն գործոց հաջողության համար:

Արաբական միացյալ ժողովուրդները թող ապրեն ու հառաջադիմեն բարօրությամբ ու խաղաղությամբ:

Օրհնությամբ՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա.**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

11 մարտի 1958 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Միացյալ Արաբական Հանրապետության իմ նախագահ ընտրվելու առիթով Ձեր հղած անկեղծ շնորհավորանքը և ազնիվ զգացումների արտահայտությունը ընդունեցի խորին գնահատանքով:

Մենք հույս ունենք, որ երիտասարդ Հանրապետությունը կդառնա ուժի մի ամրոց, որը կծառայի բարեկամ հայ ժողովրդի բարեկեցությանն ու բարգավաճմանը:

Մենք ևս բերկրանքով նշում ենք մեր և հայ ժողովրդի միջև գոյություն ունեցող բարեկամական կապերի հետագա զարգացումը:

Երախտագիտական զգացումով ցանկանում եմ Ձեզ երջանկություն և քաջառողջություն, իսկ հայ ժողովրդին՝ փառքի ու վերելքի բարեմաղթություններ:

**ԳԱՄԱԼ ԱԲԴԵԼ ՆԱՍԵՐ**

ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

17 մարտի 1958 թ.
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏ, ԿԱՀԻՐԵ